ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)
2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.
գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան - ի.գ.թ
գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -
պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.
Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.
Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.
Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
էլ. կայք՝
http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 8 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.12.2019
Հանձնված է տպագրության
15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)

2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.
зам. главного редактора
Карен Геворгян - к.ю.н.
зам. главного редактора
Ашот Петросян -
ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Николай Стойко - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Давид Аветисян - к.ю.н.
Артур Вагаршян - д.ю.н.
Сергей Аракелян - д.ю.н.
Ваге Оганнесян - д.ю.н.
Тарон Симонян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ԳՆԱՃԻ ԶՍՊՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թաթուլ Մանասերյան
ԵՊՀ տնտեսագիտության տեսության և միջազգային տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

Հաշվի առնելով հանրության լայն շերտերի և հատկապես սոցիալապես խոցելի խմբերի վրա գնաճի հնարավոր էական ազդեցությունը՝ ներկայումս առանձնակի կարևորություն է տրվում գնաճի զսպման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը: Եվ քանի որ գնաճը գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է, պետության հիմնական խնդիրներից մեկը գների կայունության ապահովումն է: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ դրանք հնարավոր չէ պահպանել զրոյական մակարդակի վրա, հետևաբար՝ գների կայունությունը գնաճի չափավոր մակարդակի պահպանումն է: Հայաստանի Հանրապետությունում գնաճի զսպումը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավաօրենսդրական ակտերով:

Առաջին հերթին ՀՀ Սահմանադրության (06.12.2015) 200.2 հոդվածը սահմանում է Կենտրոնական բանկի հիմնական նպատակները, որոնք են՝ գների և ֆինանսական կայունության ապահովումը[1]: ՀՀ Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականությամբ է փորձում վերահսկել գնաճը: Միաժամանակ, կան պետական այլ կառույցներ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, էկոնոմիկայի նախարարություն, Ֆինանսների նախարարություն և այլ կառույցներ, որոնք ևս պետք է գնաճի ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկեն[2]: «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դրամավարկային քաղաքականության ծրագրերից են գնաճի կանխատեսումները: Կառավարությունը և ԿԲ-ն մշակում են գնաճի նպատակային թիրախը, որը, համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, ամրագրվում է «Կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրում»[3]: Գնաճի նպատակային մակարդակն ամրագրվում է յուրաքանչյուր տարվա «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:

Գների կայունությունը մակրոտնտեսական կայունության կամ տնտեսական գործունեության համար բարվոք պայմաններ ստեղծելու հիմնական նախադրյալներից է: Գների կայունության ապահովմամբ Կենտրոնական բանկը նպաստում է երկարաժամկետ հատվածում բարձր տնտեսական աճին, հետևաբար՝ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Միջազգային փորձի հիման վրա իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ բարձր և տատանողական գնաճը խոչընդոտում է տնտեսության զարգացումը: Մասնավորապես, բարձր և տատանողական գնաճի պայմաններում, որը, ի դեպ, ուղեկցվում է նաև գների փոփոխման հետագա անորոշությունների մեծացմամբ, կրճատվում են իրական եկամուտներն ու խնայողությունները, ինչպես նաև երկարաժամկետ բիզնես ծրագրերում ներդրումները:

[1] http://www.president.am/hy/constitution-2015/
[2] https://armenpress.am/arm/amp/918383
[3] ՀՀ ԿԲ-ի մասին ՀՀ օրենքը, գլուխ 1, հոդված 4, էջ 1-2

Գների կայունության իրավական կարգավորումը, գնաճի տեմպի հաշվարկումը և դրա դինամիկայի կանխատեսումը կարևոր նշանակություն ունեն, քանի որ հնարավորություն են տալիս գնահատելու այն վնասի չափը, որ առաջանում է տվյալ երևույթի հետևանքով, ինչպես նաև նպաստում են հակագնաճային միջոցառումների իրականացմանը: Նախ, գնաճը չափվում է սպառողական զամբյուղի միջոցով, որում ընդգրկված ապրանքների կշիռները, համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության, ինչպես նաև միջազգային իրավական ակտերի ու գնաճի հաշվարկման միջազգային մեթոդաբանության, որոշակի ժամանակահատվածի (մի քանի տարիների) ընթացքում պահվում են կայուն: Այս պարագայում, եթե զամբյուղում ընդգրկված որևէ ապրանքի գին աճում է, ապա բնակչությունը կարող է կրճատել տվյալ ապրանքի սպառումը՝ մեծացնելով դրան փոխարինող ապրանքի սպառումը, որի գինն ավելի ցածր է: Արդյունքում վիճակագրորեն կգրանցվի գնաճ, սակայն իրականում թանկ ապրանքի սպառումը կփոխարինվի առավել էժան ապրանքի սպառմամբ՝ չթանկացնելով սպառման իրական զամբյուղը: Երկրորդ, գնաճը կարող է պայմանավորվել սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների որակական փոփոխությամբ, երբ բնակչությունը սկսում է սպառել զամբյուղում ընդգրկված ապրանքացանկի առավել որակյալ տարատեսակները: Երրորդ, գների չափավոր աճը նպաստում է արտադրության ծավալների ընդլայնմանը և տնտեսության զարգացմանը, և ընդհակառակը՝ գնանկումը կարող է նվազեցնել արտադրության խթանները: Գների այն մակարդակը, որը տվյալ երկրի տնտեսության առանձնահատկություններից ելնելով առավել համապատասխանում է գների կայունության վերոնշյալ սահմանմանը, ընտրվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: 2007 թվականից սկսած՝ ՀՀ-ում որպես գնաճի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝ ±1.5% տատանումների թույլատրելի միջակայքով: Գնաճի նպատակային մակարդակը ամրագրվում է յուրաքանչյուր տարվա «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում[1]:

Մյուս կողմից, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով կենտրոնական բանկին առաջադրվում է գնաճի սահող թիրախ, այն է՝ տարվա ընթացքում որոշումների կայացման համար գնաճի նպատակային մակարդակը և դրանից շեղումների թույլատրելի չափը: Տարվա ընթացքում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելիս կենտրոնական բանկը առաջնորդվում է որոշման կայացման օրվան հաջորդող 12-ամսյա ժամկետի համար գնաճի նպատակային մակարդակին հասնելու տրամաբանությամբ»[2]:

Գների կայունությունն ապահովելու՝ իր սահմանադրական պարտավորությունն իրականացնելու նպատակով ՀՀ Կենտրոնական բանկը իրականացնում է դրամավարկային քաղաքականություն: Շուկայական տնտեսության պայմաններում կենտրոնական բանկերը գների վրա կարող են ազդել միայն անուղղակիորեն, ինչը պահանջում է հստակ ռազմավարության իրականացում: Դրամավարկային քաղաքականությունը փողի առաջարկի կամ փողի գնի (տոկոսադրույքի) կարգավորման գործընթացն է: Առավել լայն տարածում են գտել ռազմավարության երեք տեսակներ՝ փոխարժեքի, փողի ագրեգատների և գնաճի նպատակադրման: ՀՀ ԿԲ-ն 1991-1993 թթ. սկսած դրամավարկային քաղաքականության նախադրյալների ձևավորման ժամանակաշրջանից հետո միշտ հենվել է փողի ագրեգատների նպատակադրման դրամավարկային քաղաքականության վրա: Այն մեծ հաջողության հասավ՝ արձանագրելով գնաճի գերբարձր տեմպերի ճնշման հիանալի ցուցանիշ: Սակայն 2006 թ. սկսած՝ ՀՀ ԿԲ-ն դրամավարկային քաղաքականությունում անցում կա-

[1] https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx
[2] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1965&Reading=0

տարվեց գնաճի նպատակադրման ռազմավարությանը: Գնաճի նպատակադրման ռազմավարության կարևոր առավելություններից է նաև դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների կողմից ապագայի տեսլականին միտված ծրագրերի իրագործումը, ինչն էլ ենթադրում է, որ ԿԲ բոլոր գործողությունները պետք է լինեն հեռանկարային՝ ելնելով ապագայի սպասումներից[1]: Այս գործելաոճը ԿԲ գործունեությունը կարող է դարձնել ճկուն և արդյունավետ: Նոր ռազմավարությունը հնարավորություն ընձեռեց նաև խթանելու համագործակցությունը ֆինանսական շուկաների և հասարակության միջև՝ ամսական և եռամսյակային մամլո հաղորդագրությունների, շուկայի մասնագետների հետ հանդիպումների և այլ ձևաչափերով:

Այս ռազմավարության համատեքստում որպես դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակ է դարձել գնաճի կանխատեսված մակարդակը, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Ընդ որում՝ ՀՀ ԿԲ-ն դրամավարկային քաղաքականության ռազմավարության, միջանկյալ և գործառնական նպատակների ընտրության հարցում լիովին անկախ է: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք է սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ գնաճի ծրագրային մակարդակ՝ 4%-ը՝ 1.5% թույլատրելի շեղման սահմանաչափով: Օրինակ՝ երբ բանկերին գումար է հարկավոր լիկվիդայնության պակասը ծածկելու համար (կանխիկ գումարի ժամանակավոր պակաս), նրանք դիմում են Կենտրոնական բանկին՝ որպես վերջին ատյանի վարկատու: Իսկ վերաֆինանսավորման տոկոսադրույքը վարկի գինն է, այսինքն՝ այն տոկոսադրույքը, որով բանկերը վարկային միջոցներ են վերցնում կարգավորիչից: Մասնավորապես, 2019 թ. թվականի մարտի 12-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 5.75%: 2019 թ. փետրվարին գրանցվել է 0.6% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0.5% գնանկման դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճն ավելացել է՝ կազմելով 1.9%: Ամսվա գնաճին բացառապես նպաստել է սեզոնային ապրանքների գների աճը[2]:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը միայն առևտրային բանկերին տրամադրվող վարկի տոկոսադրույքը չէ, այն նաև ԿԲ–ի հիմնական ու կարևոր գործիքն է ֆինանսական շուկայի և ողջ տնտեսության կարգավորման գործում: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի, այսինքն՝ դրա բարձրացման և նվազեցման միջոցով ԿԲ–ն ազդում է գնաճի և ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների վրա: Այսպիսով, եթե ԿԲ-ն գնահատում է, որ կանխատեսվող գնաճը շեղվում է նպատակային թիրախից, ապա սկսում է փոփոխել դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքը, ինչն էլ դրամավարկային քաղաքականության ազդեցության փոխանցման մեխանիզմի միջոցով նվազեցնում է միջանկյալ նպատակի՝ կանխատեսված գնաճի շեղումը գնաճի նպատակային թիրախից:

Օրենսդրորեն սահմանված կարգով փոխարժեքի փոփոխությունը իր հերթին տնտեսական ակտիվության և գների վրա ազդում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ճանապարհներով: Ուղղակի ազդեցությունը արտահայտվում է ներմուծված հումքային և պարենային ապրանքների տեղական արժույթով արտահայտված գների ուղղակի փոփոխման միջոցով: Փոխարժեքի անուղղակի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա դրսևորվում է զուտ արտահանման վրա ազդեցության միջոցով: Երբ դրամն արժեզրկվում է, ԿԲ–ն գնաճը զսպելու նպատակով բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Դա իր հերթին հանգեցնում է տոկոսադրույքների աճի և զսպում է բնակչության ու բիզնեսի վարկավորումը: Այդ դեպքում նվազում է պահանջարկն ու սպառումը, և որպես արդյունք՝ կրճատվում գնա-

[1] ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, էջ 9, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ:
[2] https://b24.am/finance/75677.html

ճը: Գները սկսում են նվազել, ինչը թվում է, թե լավ է, սակայն մինչև որոշակի աստիճան, քանի որ ցածր գնաճը կարող է հանգեցնել հետագա գնանկման, երբ գների նվազումն արդեն հնարավոր չի լինի վերահսկել: Ցածր պահանջարկի և գնանկման պայմաններում տնտեսությունը խթանելու համար ԿԲ–ն սկսում է աստիճանաբար նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչի արդյունքում տոկոսադրույքները կրճատվում են, վարկավորումը՝ աճում, ինչը հանգեցնում է նաև պահանջարկի և սպառման ավելացման, որի շնորհիվ ավելանում է տնտեսական ակտիվությունն ու գնաճը: Այսպիսով, վերաֆինանսավորման տոկոսադրույքն այն գործիքն է, որը թույլ է տալիս ԿԲ–ին իրականացնել առանցքային գործառույթներից մեկը՝ ապահովել գների կայունություն Հայաստանի տարածքում:

Այնուամենայնիվ, գնաճը կամ սպասվող գնաճը կարող է լինել նաև առաջարկի գործոնների հետևանք (միջազգային գների թանկացում, գյուղատնտեսական արտադրության ծավալների կրճատում և այլն), որոնց գնաճային կամ գնանկումային ազդեցությունները ժամանակի ընթացքում չեզոքանում են: Այս պարագայում դրամավարկային քաղաքականության արձագանքը տարբերվում է պահանջարկի գործոններով պայմանավորված գնաճի նկատմամբ արձագանքից:

2019-ի առաջին կիսամյակի արդյունքներով Հայաստանում գնաճն ավելի ցածր է, քան կանխատեսված 4 ± 1.5 տոկոսն է: Թեև կանխատեսումներ դժվար է կատարել, սակայն գնաճը 2.5-2.7 տոկոսի սահմաններում կարող է ամփոփվել 2019-ի համար: Հարկային օրենսդրության փոփոխություններով բարձրացել է վառելիքի, սպիրտային խմիչքների, բենզինի և դիզվառելիքի ակցիզային հարկը, գները որոշակիորեն աճի միտում ունեն, սակայն ընդհանուր ազդեցությունն այս ապրանքախմբերի զամբյուղի վրա 0.92 տոկոս է[1]:

Ինչ վերաբերում է խոցելի խմբերի սուբսիդավորմանը, ապա այստեղ հարցը բարդանում է, քանի որ իրատեսական չէ բնակչության մի ստվար հատվածի սուբսիդավորել տարբեր ապրանքատեսակների ուղղությամբ: Քանի դեռ տնտեսության իրական հատվածը լուրջ աշխուժացում չի ապահովում, և չի զարգանում տնտեսությունը, այս պայմաններում այնքան իրատեսական չէ բնակչության կեսին սուբսիդավորելը: Դա կարելի է անել առանձին դեպքերում, ասենք՝ գազի դեպքում, եթե սակագինը վերանայվի, ապա կարելի է թիրախավորել խոցելի խմբերին, բայց ոչ բոլոր ապրանքատեսակների մասով[2]:

Եթե գնաճը գերազանցի 4 տոկոսը, ապա կարիք կզգացվի արդեն օրենսդրական փոփոխությունների և համապատասխան իրավական կարգավորման, ինչպես նաև սուբսիդավորման որոշակի քաղաքականություն պետք է կիրառվի գների նկատմամբ: Ենթադրենք սեղմված գազի թանկացումը, որն ամենամեծ ազդեցությունն է ունենալու գնաճի մեջ, բերի հասարակական տրանսպորտի թանկացման, պետությունը կարող է կիրառել սուբսիդավորման միջոցներ այն տրանսպորտային ընկերությունների նկատմամբ, որոնք հաստատված, հիմնավորված կներկայացնեն հիմքեր տրանսպորտային այդ ծառայությունների սակագները բարձրացնելու ուղղությամբ: Բայց ենթադրվում է, որ վառելիքի գների բարձրացումը սակագնի վրա էական ազդեցություն չպետք է ունենա: Երբ գազի սակագինն իջեցվեց, ըստ էության, տրանսպորտային ընկերությունները շահեցին, քանի որ ուղևորափոխադրման սակագնի իջեցում չեղավ[3]: Հանրապետությունում առանձին ապրանքատեսակների գների բարձրացմանը և դրա հետևանքների հնարավոր մեղմմանն ուղղված լուծումների քննարկման նպատակով մի շարք գերատեսչությունների համապատասխան հանձնարարականներ են տրվել: Մասնավորապես, փորձագետների առաջարկով կառավարությանը հանձնարարվել է կազմել սոցիալապես կարևոր ապ-

[1] https://armenpress.am/arm/amp/918383
[2] Նույն տեղում: Մեկնաբանությունը՝ Թաթուլ Մանասարյանի:
[3] Նույն տեղում: Մեկնաբանությունը՝ Ատոմ Մարգարյանի:

ռանքների ցանկ: Հիշյալ խնդիրների իրավական արդյունավետ կարգավորման նպատակով անհրաժեշտ է, մասնավորապես, շարունակաբար ուսումնասիրել այդ ապրանքների գների դինամիկան, ներկայացնել գնային փոփոխությունները պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, գնահատել դրանց թանկացման ռիսկերը և առաջարկել միջոցառումներ թանկացման ազդեցությունը մեղմելու նպատակով: Ստացված արդյունքները հարկավոր է պարբերաբար ներկայացնել հանրությանը: Նպատակահարմար է նաև առաջարկել գնաճի հետևանքների մեղմման տարբերակներ սոցիալապես կարևոր այն ապրանքների համար, որոնք հարկային կամ այլ օրենսդրական փոփոխությունների արդյունքում թանկացել են: Առաջին հերթին սոցիալապես կարևոր գյուղատնտեսական ապրանքների համար մշակել և կիրառել տեղական արտադրության զագացման և ներմուծվող ապրանքների փոխարինման համալիր միջոցառումների ծրագիր, ինչը հնարավորություն կտա ապահովել գների հնարավորինս մատչելի մակարդակ՝ միևնույն ժամանակ խրախուսելով տեղական արտադրությունը:

Օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելիս, որոնց արդյունքում հնարավոր են սոցիալապես կարևոր ապրանքների գների էական փոփոխություններ, կառավարությունը պետք է զուգահեռ մշակի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն գնաճի հետևանքների մեղմմանը: Կարևոր է նաև մշտադիտարկում իրականացնել սեղմված գազի, բենզինի և դիզելային վառելիքի շուկաներում և հայտնաբերված խնդիրները փոխանցել տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Այս առումով էական է, որ օրենսդրորեն ընդլայնվեն Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասությունները՝ բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գների անհիմն բարձրացման դեպքերում ձեռնարկելու ավելի կտրուկ միջոցներ, մասնավորապես՝ ուսումնասիրի հացահատիկի ու ալյուրի շուկաներում գնագոյացումը և խնդիրների առկայության դեպքում ներկայացնի համապատասխան առաջարկություններ[1]:

Հիմնվելով կատարված վերլուծության արդյունքերի վրա՝ կարելի է հավաստել, որ՝

• Կարևորվում է գնաճի կայունության ապահովմանը միտված օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի լրամշակումը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից և իրականացվող բարեփոխումների բնույթից:

• Տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից մեկը գնաճի ազդեցությունն է ֆինանսական շուկայի վրա:

• Գնաճի նպատակադրման ճշգրիտ ռազմավարության ընտրությամբ, ըստ առկա ցուցանիշների, հնարավոր է հստակ պատկերացում կազմել տնտեսության վիճակի վերաբերյալ և կանխատեսել գնաճի մակարդակը հետագա ժամանակահատվածի համար:

• Հայաստանի Հանրապետության տնտեսության համար մեծ կարևորություն ունեն գնաճի կանխատեսելիության մակարդակը և դրա ազդեցությունն ազգային արժույթի վրա: Լինելով առավելապես ներմուծող երկիր' ՀՀ ֆինանսական շուկան զգայուն է արտարժույթի տատանումների նկատմամբ:

• ՀՀ կենտրոնական բանկը, կիրառելով դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներ, նվազեցնում է արտարժույթի տատանումներից առաջացող գնաճային ռիսկերը և գնահատում գնաճի մակարդակը: Այս հիմնախնդրի առկայությունը լրջորեն խոչընդոտում է ՀՀ–ում ներդրումների ներգրավումը:

[1] http://www.president.am/hy/press-release/item/2018/01/10/President-held-a-meeting-on-inflation-issues/

ЗАКОНОДАТЕЛЬНАЯ И ИНСТИТУЦИОНАЛЬНАЯ ОСНОВЫ СМЯГЧЕНИЯ РОСТА ЦЕН В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Татул Манасерян
Профессор кафедры экономики и международных экономических отношений ЕГУ, доктор экономических наук

Инициируя законодательные изменения, которые приведут к существенным изменениям цен на социально значимые товары, правительство должно разработать меры по смягчению последствий инфляции. Важное значение имеет правовое регулирование стабильности цен, оценка уровня инфляции и прогнозирование ее динамики, поскольку они позволяют оценить степень ущерба, вызванного этим явлением, и внести вклад в реализацию антиинфляционных мер. Контроль инфляции в Республике Армения регулируется Законом РА "О Центральном банке Республики Армения", Конституцией РА и другими правовыми актами. Важно, чтобы полномочия Государственной комиссии по защите экономической конкуренции были юридически расширены, чтобы принимать более решительные меры в случае неоправданного повышения цен на высококонцентрированных товарных рынках и предоставлять соответствующие предложения по сдерживанию инфляции в случае возникновения проблем.

LEGISLATIVE AND INSTITUTIONAL FRAMEWORK FOR MITIGATING PRICE INCREASES IN THE REPUBLIC OF ARMENIA

Tatul Manaseryan
Professor at the YSU Chair of Economics and International Economic Relations, Doctor of Economics

By initiating legislative changes that will lead to significant changes in prices for socially significant goods, the government should develop measures to mitigate the effects of inflation. The legal regulation of price stability, assessing the level of inflation and predicting its dynamics are of great importance, since they make it possible to assess the degree of damage caused by this phenomenon and to contribute to the implementation of anti-inflationary measures. Inflation control in the Republic of Armenia is regulated by the RA Law "On the Central Bank of the Republic of Armenia", the RA Constitution and other legal acts. It is important that the powers of the State Commission for the Protection of Economic Competition be legally expanded in order to take more decisive measures in case of unjustified price increases in highly concentrated commodity markets and to provide appropriate proposals to curb inflation in case of problems.

Բանալի բառեր – *գնաճ, ապրանքային շուկաներ, օրենսդրական կարգավորում, տնտեսական մրցակցություն, առաջին անհրաժեշտության ապրանքներ*
Ключевые слова – *рост цен, товарные рынки, законодательное регулирование, экономическая конкуренция, предметы первой необходимости*
Key words – *price increases, commodity markets, legislative regulation, economic competition, commodities of basic needs*